Աշխատության մեջ քննարկված խնդիրներից բխող եզրակացությունները, առանց մանրամասնությունների մեջ խորանալու, կարելի է ամփոփել հետևյալ հիմնական կետերում.

1. Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը պատկանում է պատմագրության ժանրին, հետևաբար՝ անխուսափելիորեն ներառում է գեղարվեստականության տարրեր ու գրական տարբեր իրողություններ: Դրանք պատմագրքի ընդհանուր հյուսվածքում վճռական դերակատարում ունեն և քննելի են իբրև առանձին համակարգ: Այսինքն՝ աշխատության խնդրադրությունը՝ «Առաքել Դավրիժեցու Պատմությունն իբրև գրական երկ», միանգամայն արդարացված է:
2. «Գիրք պատմութեանց» աշխատության ժանրային նկարագիրը երևանում է պատմագրական երկերին հատուկ ներժանրային օրինաչափություններ և հատկանշվում է միջնադարյան տարաբնույթ գրական ժանրերի ավարտուն ու ամբողջական պարագրկմամբ: Այդպիսի ավարտուն նկարագրով են ներկայանում, ի մասնավորի՝ թուղթը, զրույցը, վարքն ու վկայաբանությունը, ողբը: Կան ժանրեր, որոնք դրսևորվել են ներժանրային որոշակի մասնավորություններով և համակարգված ու ավարտուն ներկայությամբ չեն հատկանշվում: